

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N8

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի

10.04.2019թ. նիստի

Օրակարգ

1. Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկանի ընտրություն:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 31-ը: Ներկայության ցուցակը ստորագրելուց հետո խորհրդի անդամներն ու հյուրերը գրավեցին իրենց տեղերը Չարենցի անվան դահլիճում:

1. Լսեցին՝

ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ա. Ա. Բաբաջանյանը բացված համարեց նիստը և առաջարկեց, ըստ ընդունված կանոնակարգի, ընտրել նիստը նախագահողին:

Արտահայտվեցին՝

Առաջարկվեցին Ս. Գասպարյանի, Յու. Գաբրիելյանի, Զ. Հարությունյանի թեկնածությունները: Ձայների պարզ մեծամասնությամբ նիստը նախագահող ընտրվեց Ս. Գասպարյանը, որն էլ ներկայացրեց և հաստատման դրեց օրակարգը: Ներկայացվեցին դեկանի թեկնածուները՝ Ս. Աբրահամյան և Գ. Բարսեղյան: Նախագահողի առաջարկով գիտխորհուրդը հաստատեց թեկնածուների 20 րոպե ելույթ ունենալու իրավունքը: Ս. Աբրահամյանը ներկայացրեց իր դեկանության ժամանակահատվածում ֆակուլտետի գիտական և մանկավարժական ձեռքբերումները և ֆակուլտետի զարգացմանն ուղղված հեռանկարային պլանները /ծրագրային ելույթի տեքստը կցված է/: Գ. Բարսեղյանը ներկայացրեց ֆակուլտետում ակնկալվող աշխատանքների իր ծրագիրը: Գիտխորհուրդը որոշեց այլ ելույթների և թեկնածուներին ուղղված հարցերի համար հատկացնել 5-ական րոպե:

- Ուսխորհրդի նախագահ Ա. Ղազարյանը գործող դեկանին հարց ուղղեց ֆակուլտետը համապատասխան գրականությամբ ապահովելու խնդրի վերաբերյալ: Դեկան Ս. Աբրահամյանը նշեց, որ բացի կաբինետային գրադարաններում գտնվող գրքերից, ուսանողները կարող են օգտվել նաև համալսարանի կայքում տեղադրված առարկայական նյութերից և հորդորեց ամբիոններին համալրել կայքը համապատասխան ուսումնամեթոդական նյութերով, այդ թվում PDF ֆայլերի տեսքով:
- Պրոռեկտոր Ա. Ա. Բաբաջանյանի՝ առողիո և վիդեո նյութերի առկայության վերաբերյալ հարցին գործող դեկանը պատասխանեց, որ ֆակուլտետում առկա են համապատասխան նյութեր, որոնք պետք է ավելացնել և նորացնել:

- Ուսխորհրդի նախագահ Ա. Ղազարյանը, հարց ուղղելով դեկանի թեկնածու Գ. Բարսեղյանին, ասաց, որ ուսանողների օնլայն հարցումներին մասնակցությունը բավարար չէ, և ի՞նչ քայլեր է թեկնածուն նախատեսում այս խնդիրը լուծելու ուղղությամբ: Գ. Բարսեղյանը պատասխանեց, որ ուսանողների մասնակցությունն ապահովելու պատասխանատվությունը իր վրա է դրված և ուսանողների հետ ակտիվ հանդիպումներ անցկացնելու և հարցի կարևորությունը ներկայացնելու միջոցով կկարողանա վերացնել թերացումները:
- Գերմանական բանասիրության ամբիոնի դոցենտ Ս. Առաքելյանը դեկանի թեկնածու Գ. Բարսեղյանին հարցրեց, թե արդյոք ներկայացված ծրագրի հեղինակն ինքն է: Ի պատասխան հարցին Գ. Բարսեղյանը նշեց, որ ինքը միշտ փորձում է անկեղծ լինել կոլեգաների հետ և այս դեպքում նույնպես ամենայն անկեղծությամբ վստահեցնում է, որ ծրագիրը կազմել է ինքնուրույն:
- Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Յու. Գաբրիելյանը նշեց, որ գործող դեկանը ֆակուլտետը դեկավարելու ընթացքում բազմաթիվ բարդ խնդիրներ է լուծել: Այս գործընթացին, ցավոք, դեկանի տեղակալ Գ. Բարսեղյանը չի մասնակցել: Ս. Աբրահամյանը լավ է աշխատել, իսկ լավ աշխատող դեկանին փոխելու անհրաժեշտություն չկա: Բացի այդ, ինքը սխալ է համարում, որ Գ. Բարսեղյանը խոստացել է չառաջադրվել, բայց այդուհանդերձ առաջադրվել է, որը ըստ ելույթ ունեցողի բարոյական նորմերի խախտում է:
- Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ Գ. Գրիգորյանն իր ելույթում նշեց, որ բոլորովին չի թերագնահատում գործող դեկանին, բայց այսօր ոչ միայն մեր երկիրը, այլև մեր ֆակուլտետն ունի փոփոխությունների անհրաժեշտություն, և այս առումով խրախուսելի է նոր դեկանի ընտրությունը: Դեկանի թեկնածու Գ. Բարսեղյանը երիտասարդ է, ունի փոխդեկանի տասնամյա փորձ և կարող է ֆակուլտետում նոր մտածելակերպի, նոր մոտեցումների, նոր դրական զարգացումների հեղինակ դառնալ, առավել սերտացնել կապը ուսանողների հետ:
- Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Ջ. Հարությունյանը նշեց, որ ֆակուլտետի գործող դեկանը ֆակուլտետի բարոյահոգեբանական վիճակը հասցրել է մեծ բարձունքների, մինչդեռ ներկայիս ընտրությունների հետ կապված այդ մթնոլորտը խաթարվել է, քանի որ Գ. Բարսեղյանը խախտել է չառաջադրվելու իր խոստումը: Նման իրավիճակը այնպիսի խորը հիասթափություն է առաջացրել իր մոտ, որ ինքը նույնիսկ պատրաստվում է թողնել համալսարանական իր աշխատանքը:
- Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանը, կարևորելով Ս. Աբրահամյանի երկարամյա աշխատանքային փորձը, աշխատասիրությունն ու բարեկիրթ պահվածքը, նշեց, որ ինքն այնուամենայնիվ կողմ է գեղեցիկ ներկան պայծառ ապագայով փոխելուն:
- Ֆակուլտետի գործող դեկանն իր եզրափակիչ խոսքում շնորհակալություն հայտնեց այն բոլոր ամբիոններին և ամբիոնների աշխատակիցներին, որոնք առաջադրել և պաշտպանում են նրա թեկնածությունը: Ս.Աբրահամյանն ասաց, որ թեև նա դեկան ընտրվելու պահից անում էր ամեն ինչ, որպեսզի ֆակուլտետում վերանան ինտրիգները և անհանդուրժողականությունը, հաստատվեն բարյացակամ հարաբերություններ և մարդիկ կարողանան հանգիստ աշխատել, վերջին ժամանակներում, հատկապես դեկանի ընտրությանը նախորդող շրջանում, ֆակուլտետում ստեղծվեց անառողջ մթնոլորտ: Ազատ և բաց քննարկումների փոխարեն որոշ ամբիոններում անձնական շահերից ելնելով սկսեցին խմբավորումներ ստեղծել և գաղտնի աշխատանք տանել իրենց ուզած թեկնածուին առաջադրելու նպատակով: Ես կուզենայի, որ այսօր դեկանի

ընտրություններին մասնակցելին մի քանի, օրինակ, երեք, չորս թեկնածուներ: Բայց տարօրինակ կերպով այս մեծ ֆակուլտետում ամբիոնները, բացի Գ.Բարսեղյանից, ոչ մի ուրիշ թեկնածու դեկանի պաշտոնի համար չառաջադրեցին, ինչը ակնհայտորեն վկայում է այն մասին, որ Գ.Բարսեղյանի առաջադրումը նախորոք կազմակերպված և ուղղորդված գործողություն էր: Ընդ որում մինչև վերջին պահը դա թաքուն էր պահվում դեկանից, որոշ ամբիոնների վարիչներ և ինքը Գ.Բարսեղյանը նույնիսկ մոտենում էին դեկանին և վստահեցնում, որ իրենք պաշտպանում են դեկանի թեկնածությունը: Նման գործելակերպը զուրկ է բոլոր բարոյական նորմերից և սա է պատճառը, որ այս մրցապայքարը ազնիվ չի կարող համարվել: Պարզ է, որ նման գործելաոճ որդեգրած մարդիկ շատ լավ հասկանում էին, որ ազնիվ ճանապարհով, առանց խմբավորումներ ստեղծելու և մարդկանց վրա ճնշում գործադրելու, նրանք չեն կարող հաղթել դեկանի ընտրություններում: Գ.Բարսեղյանի հետ կապված ես ոչ մի անձնական խնդիր չունեմ, ես իմ աշխատանքում երբեք չեմ առաջնորդվել անձնական շահերով: Խոսքը գնում է միայն նրա՝ որպես դեկանի տեղակալի կատարած աշխատանքի մասին և այդ աշխատանքից ես գոհ չեմ: Նա հիմնականում ձախողել կամ թերի է կատարել նրան տրված հանձնարարությունները: Օրինակ, դասացուցակների կազմումը, ինչը մինչև հիմա անում է դեկանը, ֆակուլտետի կայքի համալրումը և թարմացումը, ուսանողներին վերաբերող բացակայությունների հաշվառումը և այլն: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն կոնֆլիկտային իրավիճակները և վիճաբանությունները, որոնք կապված էին Գ.Բարսեղյանի հետ, չեմ կարծում, որ նա համապատասխանում է ֆակուլտետի դեկանի պահանջներին: Կրկին անգամ կոչ եմ անում գնալ ոչ թե խմբավորումների ստեղծման, այլ միասնականության և հանդուրժողականության ճանապարհով ապահովելու համար ֆակուլտետի բարեփոխման և զարգացման ծրագրերի իրականացումը:

Որոշեցին՝ Ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. Գ. Գրիգորյան (հաշվիչ հանձնաժողովի նախագահ), Ա. Ղազարյան (հաշվիչ հանձնաժողովի անդամ), Ն. Հարությունյան (հաշվիչ հանձնաժողովի անդամ) և անցկացնել փակ, գաղտնի քվեարկություն:

2. Լսեցին՝ Փակ, գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Գ. Գրիգորյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները՝ Ս. Աբրահամյան – 7 կողմ, Գ. Բարսեղյան – 24: Անվավեր քվեաթերթիկներ չկան:

Որոշեցին՝ Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, որի հիման վրա Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկան է ընտրվել Գ. Բարսեղյանը:

3. Ընթացիկ հարցեր

Որոշեցին՝

- Հրատարակության երաշխավորել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոսներ Լ. Վարդանյանի և Լ. Հարությունյանի *Le français du droit* ուսումնական ձեռնարկը:
- Հրատարակության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ս. Վարդանյանի *Взаимодействие речевого и певческого голоса в артикуляции английской речи* մենագրությունը:

- Երաշխավորել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Նաիրա Մելքոնյանի թեկանծությունը՝ դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկան,
գիտխորհրդի նախահահ, պ.գ.թ., դոց.՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.դ., դոց.՝

Գ. Մուրադյան

10 ապրիլի 2019 թ.

ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկան Ս.Աբրահամյանի ծրագրային ելույթը /10.04.2019/

Հարգելի պրոռեկտոր,

Գիտական խորհրդի հարգելի անդամներ,

Սիրելի ուսանողներ,

Թույլ տվեք նախ և առաջ շնորհակալություն հայտնել ֆակուլտետի այն բոլոր ամբիոններին, որոնք առաջադրել են իմ թեկնածությունը դեկանի պաշտոնի համար:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետը 2019-2024թթ. իր գործունեության մեջ առաջնորդվելու է ռազմավարական նշանակություն ունեցող ԵՊՀ ծրագրային և կանոնակարգային փաստաթղթերով, այդ թվում ԵՊՀ-ի և ֆակուլտետի կանոնադրություններով, ԵՊՀ և ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրերով, ԵՊՀ որակի ապահովման հայեցագրով և այլն:

2019-2024թթ. ֆակուլտետի գործունեության ռազմավարական նպատակներից են լինելու որակյալ կրթության, բարձրորակ հետազոտությունների և որակյալ հանրային ծառայությունների ապահովումը: Կրթության բնագավառում անհրաժեշտ է աշխատանքներ տանել կրթական ծրագրերի լրամշակման և նորացման, առարկայական ծրագրերի բովանդակության հարստացման և արդիականացման ուղղությամբ: Ներկայումս ֆակուլտետում բակալավրիատի համակարգում գործում է 7 կրթական ծրագիր առկա և մեկ ծրագիր հեռակա ուսուցման համար: Ընդ որում 1-ին կուրսի առկա բաժնի 5 կրթական ծրագրերը և հեռակա բաժնի կրթական ծրագիրը բովանդակային և կառուցվածքային առումներով տարբերվում են 2-րդ, 3-րդ, 4-րդ և հեռակա բաժնի 5-րդ կուրսերում գործող կրթական ծրագրերից: Մագիստրատուրայի համակարգում գործում է 10 ծրագիր ուսուցման առկա բաժնի ուսանողների համար և 1 ծրագիր հեռակա բաժնի համար: Նոր ուումնական տարվանից ներմուծվելու է ևս մեկ մագիստրոսական ծրագիր /Վարչագործարարական թարգմանություն/: Որոշ մագիստրոսական ծրագրեր, օրինակ, Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ ծրագիրը, միջամբիոնային և միջֆակուլտետային ծրագրեր են, և նոր ծրագրեր մշակելիս պետք է ձգտել ավելացնել նման ծրագրերի տեսակարար կշիռը:

Ֆակուլտետում գործող ծրագրերի բազմատեսակությունը, տարբեր մասնագիտությունների առկայությունը, մասնագիտական լեզուների բազմազանությունը որոշակի բարդություններ են ստեղծում դրանց համադրելու, ընդհանուր սկզբունքներ մշակելու և կիրառելու համար: Նման պայմաններում պահանջվում է դրսևորել այնպիսի մոտեցումներ և չափանիշներ, որոնք հաշվի կառնեն յուրաքանչյուր ծրագրի առանձնահատկությունը կապված տվյալ լեզվամշակույթի յուրօրինակության հետ:

Հաշվի առնելով կյանքի դինամիկ զարգացումները, միջազգային համագործակցության ընդլայնվող հնարավորությունները, ինչպես նաև աշխատաշուկայի արդի պահանջները ֆակուլտետում մեծ աշխատանք է տարվել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի վերանայման և արդիականացման, գիտամեթոդական նոր մոտեցումների ներդրման ուղղությամբ: Հաջորդ ուսումնական տարվանից ներմուծվելու են օտար լեզուներ և հաղորդակցություն բակալավրիատի նոր ծրագրերը, որոնք կոչված են ապահովել երկու օտար լեզուների

հավասարազոր ուսուցում /անզլերեն-ֆրանսերեն, անզլերեն-գերմաներեն, անզլերեն-իսպաներեն, անզլերեն-իտալերեն/, ինչպես նաև հաղորդակցության տեսական առարկաների դասավանդում և գործնական կարողությունների և հմտությունների ձևավորում և զարգացում:

Եթե նախկինում ավելի մեծ ուշադրություն էր դարձվում տեսական գիտելիքների վրա, ապա այժմ կարևորում ենք գործնական հմտությունների զարգացումը: Գործնական շփման հմտությունների ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է կիրառել համապատասխան մեթոդներ, որոնք կապահովեն տեսական գիտելիքների գործնականում կիրառելու հնարավորությունը:

Նշված երկլեզվյան ծրագրերը, որոնք ապահովում են երկու օտար լեզուների հավասարազոր ուսուցում հենց առաջին կուրսի առաջին կիսամյակից, պիլոտային կարգով արդեն ներմուծվել են առաջին կուրսի ուսանողների համար: Այդ ծրագրերը միտված են ընդլայնելու ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հնարավորությունները, ապահովելու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացումը: Հաշվի առնելով այն արմատական բովանդակային փոփոխությունները, որոնք կատարվել են Ֆակուլտետում դասավանդվող կրթական ծրագրերում, ինչպես նաև եվրոպական ստանդարտներին և արդի աշխատաշուկայի պահանջներին համահունչ լինելու անհրաժեշտությունը, ֆակուլտետի կողմից առաջարկ արվեց ֆակուլտետի անվանումը փոխելու վերաբերյալ: Այդ առաջարկը քննարկվեց և հաստատվեց ԵՊՀ Գիտխորհրդի, ինչպես նաև ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից և այժմ ֆակուլտետը ունի նոր անվանում՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, որը լիովին արտացոլում է ֆակուլտետի կրթական ծրագրերի բովանդակությունը և ուղղվածությունը:

Բացի նոր ծրագրերի ստեղծումից, անհրաժեշտ է վերանայել գործող ծրագրերը արդի պահանջներին համապատասխան: Այդ պահանջներից էլնելով անհրաժեշտ է ընդլայնել ուսանողների կողմից կամընտրական առարկաների և մասնագիտացումների ընտրության հնարավորությունը: Որոշ աշխատանքներ այդ ուղղությամբ արդեն կատարվել են: Այսպես, բակալավրիատի միջմշակության հաղորդակցություն ծրագրում ներդրվել են կամընտրական առարկաների երկու տարբեր փաթեթներ, չորս մոդուլները բաղկացած: Նախատեսվում է, որ փաթեթներից մեկը ընտրած ուսանողները կհիմնական միջմշակության հաղորդակցության տեսական և գործնական խնդիրների լուծման գործում, իսկ երկրորդ փաթեթն ընտրող ուսանողներին կառաջարկվի ներկայումս մեծ պահանջարկ վայելող քոփիրայթըր մասնագիտության հմտություններ, ինչը կապվում է SS ոլորտի, քոնթենթ րայթինգի, օնլայն եղանակով կատարվող գովազդային հաղորդակցության հետ: Դա նաև կապ է ստեղծում բակալավրիատի և մագիստրատուրայի միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ նոր ծրագրի հետ:

Ներկա պայմաններում, երբ զգալի չափով աշխատաշուկան է պայմանավորում կրթական ծրագրերի արդիականությունը և արդյունավետությունը, պետք է սերտ կապեր հաստատել գործատուների հետ և ուսանողներին զինել աշխատաշուկային անհրաժեշտ գիտելիքներով: Ֆակուլտետի գործունեության կարևոր ուղղություններից պետք է լինի գործատու կազմակերպությունների հետ համագործակցային կապերի ձևավորումը և ամրապնդումը: Այս առումով ֆակուլտետը ունի որոշակի դրական փորձ: Օրինակ, ֆակուլտետը կապեր է պահպանում SS ոլորտում գործող կազմակերպությունների հետ, օրինակ, Synergy տեղեկատվական տեխնոլոգիաների կազմակերպության հետ: Կազմակերպության մասնագետները Technical writing թեմայով դասընթացներ և սեմինարներ են վարել

միջմշակութային հաղորդակցության բաժնի դասախոսների և ուսանողների համար: Բակալավրիատի և մագիստրատուրայի որոշ ուսանողներ արդեն դիմել և աշխատանքի են անցել այդ կազմակերպությունում:

Առաջիկա տարիներին կշարունակվեն աշխատանքները գործող ծրագրերի արդիականացման և նոր ծրագրերի ստեղծման ուղղությամբ: Կարծում եմ, բակալավրիատի համակարգում եղած ծրագրերի հետ մեկտեղ պետք է ներմուծել նաև լեզու և գրականություն ծրագիրը, իսկ մագիստրատուրայում գործող անգլերեն լեզու և գրականություն ծրագիրը պետք է բովանդակային տեսակետից վերափոխվի այնպես, որ համապատասխանի իր անվանմանը, այսինքն ունենա նաև արտասահմանյան գրականությանը վերաբերող կրթաբլոկ:

Կրթական գործընթացի արդյունավետությունը ապահովելու համար պետք է ակտիվացնել որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովի գործունեությունը համաձայն ԵՊՀ-ում մշակված որակի ապահովման ռազմավարության, քաղաքականության և համապատասխան ընթացակարգերի ու չափորոշիչների: Կարծում եմ՝ կարիք կա վերանայել ուսանողների գնահատման կիրառվող չափանիշները, մշակել դասախոսական կազմի կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ և այլն: Անհրաժեշտ է ապահովել որակի կառավարման պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում (PDCA) դասական շրջափուլային գործընթացի բոլոր փուլերի, հատկապես գնահատման և բարելավման փուլերի լիարժեք իրականացումը:

Պետք է շարունակել ըստ ժամանակացույց-պլանի՝ ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակների իրագործմանը միտված աշխատանքները, վերհանել եղած թերությունները և հաշվի առնել դրանք ֆակուլտետի զարգացման նոր ռազմավարական ծրագրի մշակման ժամանակ:

Պետք է շարունակել աշխատանքները արտադրական և մասնագիտական պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մշակման և իրականացման ուղղությամբ: Այս կապակցությամբ կցանկանայի շնորհակալություն հայտնել Կրթության և գիտության նախարարությանը, որը ընդառաջեց մեր խնդրանքին մագիստրատուրայի ուսանողների մասնագիտական պրակտիկան Կրթության և գիտության նախարարությունում կազմակերպելու վերաբերյալ: Արդեն մեծ թվով ուսանողներ անցել և շարունակում են անցնել պրակտիկան նախարարությունում, ինչը անշուշտ նպաստում է ուսանողների մասնագիտական աճին:

Ուսանողների գործնական հաղորդակցման հմտությունները զարգացնելու նպատակով անհրաժեշտ է ավելացնել ֆակուլտետում դասավանդող լեզվակիր դասախոսների թիվը: Այդ նպատակով անհրաժեշտ է համագործակցել դեսպանատների, լեզվակիր երկիրները ներկայացնող համապատասխան կազմակերպությունների և առանձին անձանց հետ: Ֆակուլտետը սերտ կապեր է պահպանում DAAD-ի գրասենյակի հետ, գրասենյակի տնօրենը որպես լեզվակիր դասախոս շարունակում է դասավանդել ֆակուլտետում, DAAD-ի աջակցությամբ կազմակերպվել են դասախոսների և ուսանողների այցելություններ Գերմանիայի մի շարք համալսարաններ, գերմանական բաժնի ուսանողները ակտիվ կերպով մասնակցում են Գերմանական ամառային ծրագրերին: Չեմ կարող չնշել նաև այն մեծ ներդրումը, որն ունի Հայաստանում Իտալիայի դեսպանատունը իտալերենի դասավանդման գործում: Տարիներ շարունակ դեսպանատան աջակցությամբ ֆակուլտետում աշխատել են լեզվակիր դասախոսներ, որոնք իտալերեն լեզվի դասեր են վարել իտալական բոլոր՝ ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ լեզվի խմբերում: Այժմ ֆակուլտետում աշխատում է իտալերենի նոր դասախոս:

Ուսուցման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել մանկավարժական առաջավոր փորձի օգտագործումը, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը: Ուսումնական գործընթացներում պետք է ակտիվորեն օգտագործել ուսուցման կառավարման համակարգը (LMS), այդ թվում այն նորարարական մեթոդները, որոնք կիրառվում են դասընթացների մոդուլների մշակման և նյութերից օգտվելու համար (Moodle, Schoology, Eliademy և այլն):

Ուրախալի է, որ մեր դասախոսները ակտիվ կերպով մասնակցում են վերապատրաստման ծրագրերին Եվրոպական առաջատար բուհերում, իսկ վերադառնալուց հետո սեմինարների միջոցով իրենց փորձն են փոխանցում գործընկերներին: Օրինակ, բոլորովին վերջերս միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնում ներկայացվեց «Panopto» նորարարական ծրագիրը, որը առցանց հարթակ լինելով հնարավորություն է տալիս պատրաստելու և ցուցադրելու անհրաժեշտ տեսանյութերը: ԵՊՀ-ում ներկայումս հնարառ է օգտվել «Մուդլ» ծրագրից, սակայն ոչ բոլոր դասախոսներն են տեղյակ այդ հնարավորություններից: Այդ նպատակով անհրաժեշտ է վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար, ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով, կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները: Անհրաժեշտ է հիմնադրել ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած լսարան առցանց եղանակով դասընթացներ իրականացնելու համար, ինչպես նաև ներդնել օտար լեզվով դասընթացներ հեռահար ուսուցման շրջանակներում՝ օգտագործելով էլեկտրոնային ռեսուրսները:

Ակադեմիական ազնվությունն ապահովելու և ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրագործությունը կանխելու նպատակով պետք է ապահովել ֆակուլտետում համապատասխան ծրագրի կանոնավոր կիրառումը:

Այլ միջոցառումների շարքում անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել վճարովի հիմունքներով օտար լեզվի ուսուցում, խմբագրական և թարգմանական ծառայությունների մատուցում: Կարևոր ենք համարում ներմուծել երրորդ օտար լեզվի դասավանդումը ֆակուլտետում:

Մեր ֆակուլտետի մագիստրատուրայի 2 շրջանավարտ Եագմուս + ծրագրով մեկնելով Պորտուգալիա հանձնել են այնտեղ պորտուգալերենի քննություն և ստացել են պորտուգալերենի իմացության C-1 մակարդակի վկայական: Այնպես որ այժմ մենք արդեն ունենք պորտուգալերենի մեր մասնագետները և նախատեսում ենք վերականգնել պորտուգալերենի դասավանդումը ֆակուլտետում որպես 2-րդ օտար լեզու բակալավրիատի որոշ մասնագիտությունների համար:

Ֆակուլտետի գործունեության կարևոր ուղղություններից է լինելու նաև հանրակրթական հաստատությունների և դիմորդների հետ տարվող աշխատանքները: Պետք է շարունակել ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր», ճանաչողական այցեր եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ: Բոլորովին վերջերս ֆակուլտետ էին այցելել Երևանի Հերացու, թիվ 65, թիվ 94, թիվ 170, թիվ 182, թիվ 195 ավագ դպրոցների աշակերտները, որոնց ներկայացվեց ֆակուլտետի կառուցվածքն ու գործունեությունը, ինչպես նաև ֆակուլտետում առկա կրթական ծրագրերը: Աշակերտները շրջեցին ֆակուլտետում, ծանոթացան ամբիոններին, լսարաններին և օգտագործվող տեխնիկական միջոցներին և սարքավորումներին: Նմանատիպ այցելությունները

նպաստում են ավարտական դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, բարձրացնում նրանց իրազեկությունը ֆակուլտետում գործող կրթական ծրագրերի վերաբերյալ:

Ֆակուլտետը ունի գիտահետազոտական գործունեության բազմամյա փորձ, հարուստ ավանդույթներ և գիտահետազոտական մեծ ներուժ: 2017/2018 ուս. տարում ֆակուլտետի աշխատակիցների կողմից հրատարակվել է 9 դասագիրք, 6 մենագրություն, 11 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 114 հոդված, 5 զեկուցման թեզիս: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆակուլտետում ներմուծվում են նոր ուսումնական ծրագրեր ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում, անհրաժեշտ է աշխատանքներ տանել ուսանողներին համապատասխան դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և այլ ուսումնամեթոդական նյութերով ապահովելու ուղղությամբ: Գիտահետազոտական աշխատանքների ծավալումը պետք է լինի ֆակուլտետի առաջնահերթ խնդիրներից մեկը: Անհրաժեշտ է ընդլայնել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը: Պետք է ակտիվացնել ֆակուլտետի մասնակցությունը թեմատիկ գիտահետազոտական նախագծերին, որոնք ֆինանսավորվում են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային դրամաշնորհներից: Պետք է շարունակել գիտական կոնֆերանսների և սեմինարների կազմակերպումը և անցկացումը՝ նվիրված կրթության և գիտության արդիական հարցերին: Անհրաժեշտ է շարունակել գիտակազմակերպչական ակտիվ աշխատանքները ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումները, այդ թվում «Լեզու, մշակույթ, հաղորդակցություն» միջազգային գիտաժողովը բարձր մակարդակի վրա անցկացնելու համար:

Խոսելով ֆակուլտետի միջազգայնացման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին պետք նշել, որ մեր ֆակուլտետի մեծ թվով ուսանողներ և դասախոսներ Erasmus+ ծրագրի շրջանակներում ակտիվ կերպով մասնակցել են և շարունակում են մասնակցել միջազգային փոխանակման ծրագրերին: Միջազգային համագործակցության ասպարեզում պետք է խորացնել համագործակցությունը ԵՊՀ միջազգային գործընկեր համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ: Անհրաժեշտ է զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ: Բոլորովին վերջերս ֆակուլտետ էր այցելել Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի հումանիտար ֆակուլտետի դեկանը և մեր հաղիպման ժամանակ նա իր հիացմունքը հայտնեց Երազմուս+ ծրագրով Մադրիդի համալսարան անայցելած մեր ուսանողների իսպաներենի գիտելիքների վերաբերյալ: Նա այնքան էր տպավորված մեր ուսանողների գիտելիքներով, որ ասաց, թե առաջարկելու է որպեսզի մեր ֆակուլտետը ներգրավվի Եվրոպական առաջատար համալսարանների կոնսորցիումի կազմում, որը տրամադրելու է միասնական եվրոպական դիպլոմ: Ինչպես տեսնում եք ուսանողները նույնպես կարևոր դեր են խաղում ֆակուլտետի ճանաչման ու միջազգայնացման գործում:

Անհրաժեշտ է շարունակել խրախուսել ֆակուլտետի ուսանողների ակտիվ մասնակցությունը տարբեր միջազգային կրթական և մշակութային ծրագրերին, այդ թվում Էրազմուս+ և այլ ուսանողական փոխանակման ծրագրերին, որը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնառելու եվրոպական համալսարաններում և խորացնելու իրենց գիտելիքները: Պետք է նաև խրախուսել դասախոսների մասնակցությունը արտասահմանյան բուհերում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին, ավելի հաճախակի դարձնել ֆակուլտետի և արտասահմանյան բուհերի դասախոսների փոխադարձ այցելությունները: Ֆակուլտետի ուշադրության կենտրոնում

պետք է մնա համագործակցությունը Հայաստանում գործող արտասահմանյան դեսպանությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Ֆակուլտետը ունի սերտ կապեր Եվրոպական տարբեր համալսարանների, այդ թվում Ֆրանսիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Իտալիայի և այլ երկրների բուհերի հետ, ակտիվ կերպով իրագործվում են դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրեր: Որպես դրական միտում կարելի է արձանագրել ֆակուլտետի նկատմամբ հետաքրքրության աճը օտարերկրյա ուսանողների կողմից, որոնք ցանկություն են հայտնում սովորել մեր ֆակուլտետում: Օրինակ, վերջին ուստարում Էրազմուս + ծրագրի շրջանակներում ֆակուլտետում սովորել է 1 ուսանող Բոլոնյայից, 1 ուսանող Մոնպելիեից, 2 ուսանող Գերմանիայի Վորմսի համալսարանից, ինչպես նաև 1 ուսանող Չինաստանից: Բոլորովին վերջերս Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ֆակուլտետ այցելելու և ուսանողների համար դասախոսություններով հանդես գալու ցանկություն են հայտնել Կրակովի և Միլեզիայի համալսարանների դասախոսներ, որոնք կայցելեն ֆակուլտետ 2019 թ. մայիսին և հոկտեմբերին: Ֆակուլտետ այցելելու ցանկություն են հայտնել նաև դասախոսներ ԱՄՆ-ից:

Ուսումնական գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ կլինի նաև շարունակել ֆակուլտետի ուսումնական տարածքների տեխնիկական վերազինումը և կահավորումը: Այս առումով, որպես դրական փորձ կարելի է նշել ֆրանսիական բանասիրության ամբիոնի կատարած աշխատանքը Համալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնի բացման ուղղությամբ: Կենտրոնը կահավորված է ժամանակակից տեխնիկական միջոցներով: Կենտրոնում ոչ միայն անցկացվում են դասացուցակով նախատեսված դասեր, այլև կազմակերպվում անվճար դասընթացներ բոլոր ցանկացողների համար:

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնը համալրվել է 2 նոր բանավոր թարգմանության համար նախատեսված լսարաններով, որտեղ անցկացվում են համաժամանակյա և հետևողական թարգմանության դասեր: Այդ կապակցությամբ չենք կարող չհայտնել մեր շնորհակալությունը պ. Ա. Միմոնյանին, ում օգնության շնորհիվ հանարավոր եղավ ստեղծել այդ կաբինետները:

Առաջնահերթ խնդիրների թվում պետք է նշել նաև ֆակուլտետի ուսանողական խորհուրդի (ՈւԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈւԳԸ) ներգրավվածության ավելացումը ուսանողությանը վերաբերող հարցերի քննարկման և լուծման գործում, այդ թվում կրթական, գիտահետազոտական, մշակութային: Անհրաժեշտ է ապահովել ուսանողական լայն ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներին /հոդվածներ, թարգմանություններ և այլն/: Կարևոր ենք համարում ուսանողների կողմից տարվող ակտիվ կամավորական աշխատանքը: Ֆրանկոֆոն պետությունների գագաթնաժողովի ժամանակ մեր ֆակուլտետի ուսանողները կամավոր սկզբունքով ակտիվ կերպով աշխատել են որպես թարգմանիչներ և ուղեկցողներ:

Կան, իհարկե, որոշակի այլ խնդիրներ: Շատ է խոսվել լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոնի ստեղծման անհրաժեշտության մասին, սակայն այդ հարցը դեռ չի ստացել իր լուծումը: Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած լեզուների կենտրոնը կնպաստի համալսարանի այլ ֆակուլտետներում օտար լեզվի ուսուցման արդյունավետության բարձրացմանը, հնարավորություն կտա խմբերի բաժանումը կատարել ըստ ուսանողների

գիտելիքների, կապահովի լեզուների բազմամակարդակ ուսուցումը, այդ թվում մասնագիտական խորացված ուսուցումը ըստ ոլորտների:

Այլ խնդիրների շարքում կարող ենք նշել նաև այն, որ որոշ դասախոսներ ուշադիր չեն տեղեկագրեր լրացնելու ժամանակ և կատարում են սխալներ: Կան աշխատանքային կարգապահության հետ կապված չլուծված հարցեր, օրինակ, դասախոսների և ուսանողների ուշացումներ, բացակայություններ, դասախոս-ուսանող հարաբերությունների հետ կապված խնդիրներ:

Ակնհայտ է, որ Ֆակուլտետի առջև կանգնած բարդ և բազմապիսի խնդիրների լուծումը կպահանջի բոլոր ստորաբաժանումներից միասնական և համերաշխ աշխատանք ի շահ ֆակուլտետի և մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի:

Շնորհակալություն ուշադրության համար:

Եվրոպական լեզուների և

հաղորդակցության Ֆակուլտետի դեկան

Ս.Աբրահամյան